ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 08/15.3/7106-19

«31» 05 2019 թ.

<<Նաիրի ՃՇՇ>> ԲԲԸ-ի տնօրեն
պարոն. Յ.ԽԵՐԻՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խերիմյան

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ի միջև 2015 թվականի դեկտեմբերի 28-ին կնքված թիվ «ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/2-3» գնման պայմանագրի (այսուհետեղ՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը պետք է իրականացներ Նաիրիի տարածաշրջանի ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանման աշխատանքները, սակայն Ձեր ընկերության կողմից աշխատանքները կատարվել են խախտումներով և թերություններով, ինչը չի համապատասխանում Պայմանագրի անբաժանելի մաս կազմող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին:

Հիմք Պայմանագրի 2.1.3 կետը՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը որոշեց 2019 թվականի մայիսի 31-ին միակողմանի լուծել վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական «900005000758» հաշվեհամարին փոխանցել գանձման ենթակա 8,792,570 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10%):

Հարկ եմ համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590009, էլ. փոստ՝ samvel.amirkhanyan@mtcit.am

ենթակետի՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

Միաժամանակ հայտնում եմ, որ հնարավոր տույժերի և տուգանքների վերաբերյալ լրացուցիչ կտեղեկացվի:

Հարգանքով՝ **Ս. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ**

5/31/2019

ԳՈՐԾԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ՍԱՄՎԵԼ

Signed by: AMIRKHANYAN SAMVEL 2210540046

Կատարող՝ Ֆինանսական վարչություն
Պետ՝ Վ.Աթյան
(010)-59-01-11

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590009, էլ. փոստ՝ samvel.amirkhanyan@mtcit.am